Ընդհանուր ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու՝ բանավոր և մաթեմատիկական մասերից:

Յուրաքանչյուր մասը պարունակում է 40 առաջադրանք: Ամեն մի առաջադրանքին կցված է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Թեստի յուրաքանչյուր մասի վրա աշխատելու համար տրվում է 1 ժամ և 35 րոպե:

Ուշադրությամբ ընթերցեք յուրաքանչյուր առաջադրանքի հրահանգը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելիս, և այնուհետև ընտրեք պատասխանը:

Թեստի առավելագույն միավորն է 80:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար կարող եք գործածել ստեղնաշարի կոճակները:

Բանավոր մաս

Համանմանություններ

Այս առաջադրանքներում տրված է մգացված տառատեսակով աչքի ընկնող երկու բառ (նախնական զույգ), որոնց իմաստի միջև գոյություն ունի որոշակի հարաբերակցություն: Դրանց երկայնքով տրված է բառ, որը ենթադրական պատասխաններից որևէ մի տարբերակին պետք է համապատասխանի այնպես, որ բառերի իմաստների միջև հարաբերակցությունը նախնական զույգում գոյություն ունեցող հարաբերակցությանը նման (համանման) լինի:

1. Ստանդարտային : ստանդարտ ավանդական:

(ա) ծեսս-սովորույթ

(բ) նորույթ

(գ) պատմություն

(դ) արարողություն

(ե) վերապրուկ

2. մոլախոտ : բանջարանոց **վիրուս :**

(ա) պատվաստանյութ

(բ) վարակ

(գ) ախտանիշ

(դ) պատրաստուկ

(ե) օրգանիզմ

3. խաղացանկ : տեսականի գրքի ցանկ :

(ա) սխեմա

(բ) ճաշացուցակ

(գ) դեղատոմս

(դ)աղյուսակ

(ե) նախագիծ

4. մեկնաբանում է : հասկանալի **հորինում է :**

(ա) կրկնված

(բ) մեջբերված

(գ) ներշնչված

(դ) օրիգինալ

(ե) տեղեկատվական

5. թաքնված: որոնում **մեղադրված :**

(ա) մեղադրանք ներկայացնել

(բ) խոստովանել

(գ) մերկացնել

(դ) պատժել

(ե) պաշտպանել

Նախադասության լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց է թողնված մի քանի բառ: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծերով: Մեկ գիծը երբեմն համարվում է մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակը պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից բաժանված են շեղ (/) գծերով: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հերթականությամբ տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում կստացվի իմաստով ճիշտ նախադասություն:

6. Նորածինների մոտ կապվածություն այն մարդու նկատմամբ է առաջանում, ով հոգում է նրանց պահանջմունքների բավարարման մասին: ------ , սննդի ընդունումը մայրերի և զավակների միջև մոտ հարաբերությունների ձևավորման համար ------ գործոն է: ------ , որ կապվածությունը միայն սովի զգացումը բավարարելուց է կախված. նորածին երեխաները կապվածություն ------ , ովքեր նրանց ------ են կերակրում:

(ա) Օրինակ/կարևոր /Չնայած դրան, չենք ասի/դրսևորում են ընտանիքի այն անդամների նկատմամբ/հազվադեպ

(բ) Թերևս / նվազ կարևոր / Համապատասխանաբար, չենք ասի/ չեն դրսևորում նաև ընտանիքի այն անդամների նկատմամբ/ հազվադեպ

(գ) Օրինակ / կարևոր / Այդ պատճառով կարելի է ասել /չեն դրսևորում ընտանիքի այն անդամների նկատմամբ/ հաճախ

(դ) Թերևս / նվազ կարևոր / Հետևաբար,կարելի է ասել/ դրսևորում են նաև ընտանիքի այն անդամների նկատմամբ/ հաճախ

7. Համակարգչային ցանցի կիրառմամբ ------ հեռավորության կրճատումը բարձր և ցածր տնտեսական կարգավիճակ ունեցող մարդկանց միջև: Դա------ տեղեկատվական տարածք է ստեղծում: ------ , այն կարող է խավերի միջև գոյություն ունեցող տարածությունը ------ : Դա կառաջացնի որակյալ տեղեկատվություն ստանալու վրա հաստատված բարձր հարկ: Համապատասխանաբար, իրազեկվածության տեսակետից ------ հարուստ և աղքատ խավերի միջև:

(ա) ավելի ու ավելի դժվարանում է / նրանց համար անհավասարաչափ մատչելի/ Չնայած դրան /նաև կրճատել / կաճի տարբերությունը

(բ) ավելի ու ավելի հեշտանում է / երկու խավի համար ընդհանուր /Թերևս /նաև մեծացնել /հնարավոր է կրճատվի տարբերությունը

(գ) ոչիրատեսական է/անհավասարաչափ մատչելի/Միաժամանակ/նաև կրճատել/կկրճատվի տարբերությունը

(դ) հնարավոր է դառնում/ երկու խավի համար ընդհանուր /Միաժամանակ / նաև մեծացնել/հնարավոր է մեծանա տարբերությունը

8. Կենսոլորտը, որը ներառնում է բույսերին և կենդանիներին, բնության անկենդան մասի համեմատությամբ ------ , այն մեծ ազդեցություն ------ բնության անկենդան մասի վրա: Բույսերի ազդեցությունը
------ , քանզի դրանց թվաքանակը ------ :

(ա) այնքան էլ փոքր չէ: Չնայած դրան/չի գործում/առանձնահատուկ կարևոր է / պակաս է կենդանիներից
(բ) ավելի փոքր է: Չնայած դրան/ է գործում /առանձնահատուկ կարևոր է /գերազանցում է կենդանիներին
(գ) ավելի փոքր է: Ճիշտ այդ պատճառով/ չի գործում / էլ ավելի աննշան է/ /գերազանցում է կենդանիներին
(դ) այնքան էլ փոքր չէ: Ճիշտ այդ պատճառով/ է գործում / էլ ավելի աննշան է/ ետ չի մնում կենդանիներից

9. Սոցիալ-էվոլյուցիոներները հաստատում են, որ սոցիալական էվոլյուցիան կենսաբանական ------ այդ թվում նաև ------ են տեսնում. կենսաբանական էվոլյուցիան, որի համար էական է ինդիվիդի համակերպվածությունը, ------ սոցիալական էվոլյուցիան, որը ենթադրում է հասարակության համակերպվածություն, ընթանում է ------ :

(ա) էվոլյուցիային համանման է, թերևս / տարբերություններ/ դանդաղ և պատահական է, իսկ /ինչպես չպլանավորված, այնպես էլ սահմանված պլանի համաձայն և դրա արդյունքներն էլ համեմատաբար արագ են

(բ) էվոլյուցիայից ակնհայտորեն տարբերվում է, թերևս /համանմանություն/դանդաղ և պատահական է, ճիշտ այնպես, ինչպես /ինչպես չպլանավորված, այնպես էլ սահմանված պլանի համաձայն

(գ) էվոլյուցիայից շատ չի տարբերվում, այդ պատճառով / շատ զուգահեռ/ ներառնում է ամբողջությամբ հասարակություններ և ոչ ինդիվիդներ, այն բանի նմանությամբ, որ /կառուցվածքային փոփոխությունների և փրկության գործընթացի տեսքով

(դ) էվոլյուցիային համանման չէ/նշանակալից տարբերություն /մշակույթային միտումների փոփոխականություն է պայմանավորում այն դեպքում, երբ/ինդիվիդի միջավայրին հարմարվելու տեսքով և նախապես սահմանված բնույթ ունի

10. Գոյություն չունի ավելի դժվար, հաջողության տեսակետից ավելի կասկածելի և վտանգավոր գործ, քան նոր կարգապահության արմատավորումը. նորույթը արմատավորողին ------ բոլորը, ում համար ------ կարգապահությունը, իսկ նրանք, ում համար, ընդհակառակն, ------ , անվճռականորեն կպաշտպանեն նրան:

(ա) աջակցում են/մատչելի կլինի նոր/հինը պակաս մատչելի էր
(բ) թշնամաբար են վերաբերվում / մատչելի չի լինի նոր/ հինը ավելի մատչելի էր
(գ) աջակցում են/ մատչելի չի լինի հին/նորը պակաս մատչելի կլինի
(դ) թշնամաբար են վերաբերվում / մատչելի էր հին/նորը ավելի մատչելի կլինի

Տրամաբանություն

Այսպիսի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կայացրած եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցին, որը կցված է յուրաքանչյուր առաջադրանքին և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցերի պատասխան տալը կհեշտանա, եթե տվյալները արտահայտեք գծագրի կամ դիագրամայի ձևով:

11. Տրված է.

- Այս ճանապարհին թույլատրվում է երթևեկել առանց անվտանգության փոկի:

*Ստորև թվարկածներից ո՞րն է **բխում** տրված դրույթից:*

Այս ճանապարհին.

(ա) Չի թույլատրվում երթևեկել անվտանգության փոկով:

(բ) Արգելված է անվտանգության փոկով երթևեկելը:

(գ) Պարտադիր չէ անվտանգության փոկով երթևեկելը:

(դ) Պարտադիր է առանց անվտանգության փոկի երթևեկելը:

(ե) Պարտադիր չէ առանց անվտանգության փոկի երթևեկելը:

12. Հայտնի է, որ շները կարող են ճանաչել մարդու հույզերը – նրանք զանազանում են՝ մարդը բարկացա՞ծ է, ուրա՞խ է, թե մտահոգվա՞ծ է, և արձագանքում են համապատասխանաբար: Դրա հետ միասին, հետազոտողներից ոմանք ենթադրում են, որ շները ունակ են, անգամ միայն դեմքի արտահայտությամբ ճանաչել մարդու հուզական վիճակը:

*Ստորև թվարկածներից ո՞ր իրավիճակն է **առավելապես հաստատում** նշված ենթադրությունը:*

(ա) Սեփական տեսակի ներկայացուցիչների հույզերը ճանաչելու ունակությունը լավ է զարգացած բոլոր այն տեսակների մոտ, որոնց բնութագրում է սոցիալականության բարձր աստիճանը – այսպիսիների շարքին է պատկանում նաև շունը:

(բ) Հայտնի է, որ շները բավականին վատ տեսողություն ունեն և ինչպես միմյանց, այնպես էլ մարդկանց հետ հարաբերությունում հիմնականում կիրառում են հոտառության և լսողության ունակությունները:

(գ) Փորձաքննությունները ցույց տվեցին, որ շներն ունեն մարդկանց դեմքերը ճանաչելու բնածին ունակություն – նրանք նաև հեռու տարածությունից, տեսնելով միայն դեմքը, տարբերում են արտաքնապես միմյանց բավականին նման մարդկանց:

(դ) Փորձաքննությունները, որոնց նպատակն էր շների կողմից մարդկանց հույզերը ճանաչելու ունակության ուսումնասիրությունը, անցկացվեցին միայն մեկ ցեղի շների վրա:

(ե) Մեկ փորձաքննությունում շների մեկ խմբին սովորեցնում էին ճանաչել մարդկանց հույզերը մարդուն համակարգչի էկրանի վրա տեսնելիս, իսկ երկրորդ խմբին՝ մարդուն անմիջականորեն տեսնելիս: Երկրորդ խումբը բավականին հաջող հայտնվեց:

13. Հյուրանոցի միջանցքի երկու կողմում, միմյանց դեմ հանդիման, երեքական սենյակ է: Միջանցքի սկզբից սենյակները համարակալված են 1-ից մինչև 6 թվերով ժամացույցի սլաքի շարժման ուղղությամբ: Այս սենյակներում բնակեցվեց վեց հյուր. Կախա, Սանդրո, Մակա, Իա, Նիկա և Աննա (ոչ անպայման այս հերթականությամբ): Տրված է.

1	**2**	**3**
6	**5**	**4**

- Կախայի և Մակայի սենյակները անկյունագծորեն են դասավորված (ծայրահեղորեն հեռացած միմյանցից):
- Սանդրոյի և Իայի սենյակները միջանցքի մի կողմում են:

Ստորև թվարկածներից սենյակի համարների ո՞ր բաշխումն ***<u>է հնարավոր</u>****, եթե նշված պայմանները կատարվում են.*

	1	**2**	**3**	**4**	**5**	**6**
(ա)	Աննա	Նիկա	Մակա	Կախա	Իա	Սանդրո
(բ)	Մակա	Նիկա	Սանդրո	Կախա	Իա	Աննա
(գ)	Կախա	Իա	Աննա	Մակա	Նիկա	Սանդրո
(դ)	Իա	Սանդրո	Կախա	Մակա	Աննա	Նիկա
(ե)	Սանդրո	Իա	Կախա	Աննա	Նիկա	Մակա

14. Տրված է.

- Գոյություն ունեն տերևավոր բույսեր:
- Բոլոր կանաչ բույսերին անհրաժեշտ է թթվածին:
- Բոլոր տերևավոր բույսերը պատկանում են կանաչ բույսերին:

*Ստորև թվարկածներից ո՞րը **կարող է լինել սխալ**, եթե տրված դրույթները ճշմարիտ են:*

(ա) Բոլոր տերևավոր բույսերին անհրաժեշտ է թթվածին:

(բ) Գոյություն ունի տերևավոր բույս, որին անհրաժեշտ է թթվածին:

(գ) Գոյություն ունի ոչտերևավոր բույս, որին անհրաժեշտ է թթվածին:

(դ) Բոլոր բույսերը, որոնց անհրաժեշտ չէ թթվածին, ոչտերևավոր են:

(ե) Գոյություն չունի տերևավոր բույս, որին անհրաժեշտ չէ թթվածին:

Ընթերցած տեքստի վերաիմաստավորում

Ուշադրությամբ ընթերցեք և վերաիմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տվյալ տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, պատասխանելու համար հնարավոր է պահանջվի կրկին տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից հարցին անցնել: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումները «սեղմելով»:

i Վրաստանում արտադրանքի կեղծումը, հիմնականում, նկուղներում սարքավորված «արտադրամասերում» է կատարվում, որտեղ արտասահմանյան բրենդի օծանելիք կամ պարենային արտադրանք են պատրաստում: Այսպիսի նկուղների թիվը աստիճանաբար նվազում է և միտումն այնպիսին է, որ վաղ թե ուշ դրանք կվերանան: Թերևս Թբիլիսիում այնուամենայնիվ գոյություն ունի մեկ, ավելի ճիշտ, երկու «նկուղ», որոնց իրավամբ վերացում չի սպառնում: Այստեղ իրական կամ ոչիրական մարդկանց և գրական կերպարների կյանքի «կեղծարարություն» է տեղի ունենում: Այս ամենը կատարվում է բեմի վրա, մոտավորապես 100 հանդիսատեսի առջև:

ii Անցյալ դարի 90-ական թվականների միջին ժամանակաշրջանում, քաղաքացիական պատերազմի ավարտից հետո ծանր տնտեսական իրավիճակ է, ժողովուրդը թատրոնի համար ժամանակ չունի, սակայն հասկանում է, որ ինչ-որ բան պետք է փոխել: Վրացական բեմական արվեստում ի հայտ է գալիս «Թատերական նկուղ» նոր բառը: Ստեղծագործությունը շքեղ դահլիճներից իջնում է սովորական նկուղ: Թատերական «շուկայում» արմատավորվում է նոր արտադրանք, ավելի ճիշտ, կատարվում է հին դիզայնի վերափոխում, այսինքն՝ փոխվում է սպառողին դրա մատուցման հայեցակարգը. հանդիսատեսը գնում է այնպիսի թատրոն, որտեղ չի զգում հակասություն արտաքին աշխարհի հետ:

iii Սկզբնական փուլում մեծ էր տապալման ռիսկը՝ ինչպես ֆինանսական, այնպես էլ ստեղծագործական տեսակետից, թերևս, առաջին իսկ ներկայացմանը, որին մասնակցում էին հայտնի դերասաններ, հետևեց հաջողությունը:Այստեղ մշտապես կատարելագործվում է ռեժիսորների և դերասանների աշխատանքային միջավայրը: Նրանց համար թատրոնում ստեղծված է ազատ տարածություն: Ներկայացում բեմադրել կարող է ցանկացած արհեստավարժ ռեժիսոր, որն ինքն է ընտրում դերասաններին, պիեսը և այլն: Բացի դրանից, հատկացված է մեկ օր՝ երկուշաբթի, երբ բեմը զիջում են սկսնակ ռեժիսորներին: Վերը թվարկած տեսակետների կապակցությամբ լրիվ ազատությունը թատերական նկուղի ամենագլխավոր սկզբունքն է: Կատարվում է նաև ֆինանսական ռիսկերի ինչ-որ կերպ ապահովագրում. եթե ներկայացումը երեք անգամ անհաջողություն կրեց, այսինքն՝ ներկայացմանը ներկա չգտնվեց հանդիսատեսի բավարար թվաքանակ, այն հանվում է բեմից: Նշանակալից է որ հնարավորինս ավելի շատ ներկայացում բեմադրվի:

Անցնել հարցերին. 15 16 17 18 19 20

Թատրոնի լսարանը առավելապես կազմված է մինչև 40 տարեկան մարդկանցից: Իսկ նրանց առավելագույն մասը 16-25 տարեկան հանդիսատես է: Երիտասարդները միևնույն ներկայացմանը ներկա են գտնվում շատ անգամ, անգիր գիտեն դերասանների տեքստերը, ինչը նրանց բեմի և դերասանի հետ էլ ավելի է մերձեցնում: Նկուղը կարողացավ նոր սերնդի մեջ հետաքրքրություն արթնացնել թատրոնի նկատմամբ, ինչը թատրոնին շնորհում է հավելյալ սոցիալական բեռնվածություն:

iv Ցանկացած կազմակերպության համար մրցակցությունը ամենաուժեղ խթաններից մեկն է: Նկուղն էլ ունի մրցակիցներ, դրանք բոլոր մնացած թատրոններն են, բացի Ռուսթավելիի թատրոնից, որը նկուղում գործողների կարծիքով, միանգամայն այլ բեռնվածություն ունի վրաց բեմական արվեստում: Այդ պատճառով էլ նկուղի թատրոնում աշխատում են անձնուրացաբար, որպեսզի հանդիսատեսին առաջարկեն մրցունակ «արտադրանք»: Այստեղ տարվա ընթացքում մի քանի պրեմիերա է տեղի ունենում: Նկուղի հաջողությունների լավագույն ինդիկատորը այն էր, որ ստեղծվեց ընդարձակվելու կարիք: Հայտնվեց ևս մեկ՝ Վակեի նկուղը:

v Նկուղը գործարար հարաբերություններ ունի տարբեր կազմակերպությունների և ընկերությունների հետ, ինչը ծառայում է ինչպես մեկ, այնպես էլ մյուս կողմի շահերին: Թատրոնը նրանցից հիմնականում ստանում է ֆինանսական աջակցություն, փոխարենը ընկերություններին հնարավորություն է տրվում աջակցելու արվեստի հեղինակավոր օջախին և բարձրացնելու սեփական վարկանիշը: Նկուղում մտածում են, որ բոլոր առաջադեմ կազմակերպությունները իրենց վարկանիշը պետք է բարելավեն հասարակության համար օգտակար գործով, ինչը հաճախ արտահայտվում է բարեգործության մեջ: Նկուղը նույնպես բեմադրում է բարեգործական ներկայացումներ:

vi Ինչ կլինի ապագայում, դա կախված է այն բանից, թե ինչ ռազմավարություն, զարգացման ինչ ուղի կընտրի թատրոնը որպես կազմակերպություն: Իսկ մի բան հայտնի է. միշտ կլինի բեմ, կլինեն բեմի վրա խաղացող դերասաններ, շունչը պահած հանդիսատես և ռեժիսոր կուլիսների ետևում:

Անցնել հարցերին. 15 16 17 18 19 20

15. Ի՞նչ նպատակով է բերված նկուղում գործող երկու տիպի կազմակերպության նկարագրությունը տեքստի I պարբերությունում:

Դա՝

(ա) Փորձ է բացատրելու, թե ինչու են վերանում որոշ կազմակերպություններ, իսկ որոշ կազմակերպությունների՝ ընդհակառակն, վերացում չի սպառնում:
(բ) Փորձ է, ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելու այն կազմակերպությունների նմանության կամ տարբերության վրա, որոնք գործում են նկուղներում:
(գ) Հակասության մի տեսակ միջոց է, որպեսզի ցույց տրվի, որ արտադրանքի կեղծումը հնարավոր է տարբեր կերպ:
(դ) Գեղարվեստական մի տեսակ միջոց է ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելու և հետաքրքրություն հրահրելու համար:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

16. Ի՞նչը թելադրեց «Թատերական նկուղի» հիմնադիրներին հանդիսատեսի համար մատակարարելու նոր արտադրանք:

(ա) Երկրում գոյություն ունեցող իրավիճակը և ավանդական թատրոնի համար սովորական միջավայրի անհամապատասխանությունը:

(բ) Ցանկությունը՝ ստեղծելու որևէ օրիգինալություն և դրանով հասարակության ուշադրությունը ուղղելու բեմական արվեստի կողմը:

(գ) Այն բանի գիտակցումը, որ հարկավոր էր փոփոխություններ մտցնել երկրում գոյություն ունեցող ծանր տնտեսական իրավիճակի մեջ:

(դ) Երկրում ստեղծված իրավիճակից ելնելով, թատրոնի համար համապատասխան շենք գտնելու դժվարությունը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

17. Ստորև տրված են թատրոնի ժողովրդականացմանը նպաստող գործոնները: Դրանցից ո՞րը չի հիշատակված տեքստում:

(ա) Հայտնի դերասանների մասնակցությունը նկուղի թատրոնի ներկայացումներին
(բ) Լսարանին գրավելու համար անցկացված գովազդային միջոցառումները
(գ) Արհեստավարժ ռեժիսորների կողմից ներկայացումների բեմադրությունը
(դ) Հանդիսատեսին նոր-նոր ներկայացումներ առաջարկելը

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

18. Տեքստի ո՞ր պարբերություններում է ակնարկում «Նկուղի թատրոնի» սոցիալական կողմնորոշումը:

(ա) I, II և IV պարբերություններում

(բ) II, III և V պարբերություններում

(գ) I և V պարբերություններում

(դ) III և IV պարբերություններում

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

19. Նախադասությունների ո՞ր զույգում է ներկայացված (I) փաստը և (II) դրա բացատրության հանգամանքը:

(ա) I. Մրցակցությունը կազմակերպության համար ուժեղագույն խթան է,
II. Այստեղ աշխատում են անձնուրացաբար:

(բ) I. Հանդիսատեսին պետք է առաջարկեն մրցունակ «արտադրանք»,
II. Այստեղ տարվա ընթացքում մի քանի պրեմիերա է տեղի ունենում :

(գ) I. Նկուղին մրցակից են բոլոր թատրոնները, բացի Ռուսթավելիի թատրոնից,
II. Ռուսթավելու թատրոնը միանգամայն այլ բեռնվածություն ունի վրաց բեմական արվեստում:

(դ) I. «Նկուղի» հաջողության լավագույն ինդիկատորն է դրա ընդարձակվելու կարիքը,
II. Հայտնվեց «Վակեի նկուղը»:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

20. Ի՞նչ է տեքստի հիմնական նպատակը:

(ա) Ծանոթացնել թատրոններից մեկի ստեղծման պատմությանը և դրա, որպես կազմակերպության, հաջողությունը պայմանավորող որոշ գործոններին:

(բ) Որևէ մի թատրոնի օրինակով քննարկել այն նշանակալից հանգամանքները, որոնք հարկավոր է ի նկատի ունենալ Վրաստանում գործող ցանկացած կազմակերպության համար:

(գ) Հիմնավորել այն տեսակետը, որ թատրոնին և թատերական կյանքին ոչինչ չի սպառնում, չնայած այն բանին, թե զարգացման ո՞ր ուղին կընտրեն դրա պարագլուխները:

(դ) Ցույց տալ, թե ինչ բարդությունների հետ է կապված բեմական արվեստում նոր խոսք ասելը:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

Համանմանություններ

Այսպիսի առաջադրանքներում տրված է մուգ տառատեսակով առանձնացված երկու բառ (նախնական զույգ), որոնց նշանակությունների միջև գոյություն ունի որոշակի հարաբերակցություն: Որոշեք ինչպիսին է այս հարաբերակցությունը:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակում նույնպես տրված է նշանակությամբ փոխկապակցված բառերի զույգ: Դրանցից ընտրեք այն զույգը, որտեղ բառերի նշանակությունների միջև հարաբերակցությունը նախնական զույգում գոյություն ունեցող հարաբերակցությանը նման (համանման) է: Պատասխանը ընտրելիս՝ հաշվի առեք զույգերում բառերի հերթականությունը:

21. Ֆիլմ նկարահանեց : կինոտեսախցիկ

(ա) նվագախումբը ղեկավարեց : պարտիտուրա

(բ) ֆոկուսը ուղղեց : ֆոտոսարք

(գ) պատը նկարեց : վրձին

(դ) դաշնամուրը լարեց : ստեղն

(ե) շենքը երեսապատեց : սալիկ

22. Արգելված : թույլատրված

(ա) դիմակավորված : ծածկված

(բ) այլաբանական : երկիմաստ

(գ) փոխաբերական : գեղարվեստական

(դ) ծածկագիր : բացահայտված

(ե) հիպերբոլացված : չափազանցված

23. Բաք : ավազան

(ա) վանդակ : բջիջ

(բ) ծոցատետր : գիրք

(գ) քար : քարայր

(դ) ակունք : վերնագիր

(ե) հողահանդակ : հատված

24. Հավանականություն : հնարավորություն

(ա) էկոհամակարգ : տեսակ

(բ) աղյուսակ : սխեմատիկություն

(գ) սյուժե : լակոնիկություն

(դ) խորհրդանիշ : պայմանականություն

(ե) երևույթ : մաշտաբայնություն

25. Հավասարության նշան : հավասարում

(ա) կետ : կոորդինատներ

(բ) Արեգակ : Արեգակնային համակարգ

(գ) գետ : դելտա

(դ) ձիարշավ : պատնեշ

(ե) կամար : դահլիճ

26. Սկանդալ : հայտնի դարձրած

(ա) արարողություն : գաղտնիք

(բ) ուսմունք : ուտոպիկ

(գ) արժեզրկում : պարբերական

(դ) մեթոդ : կոմպլեքսային

(ե) պանդեմիա : տոտալ

27. Օձաժապավեն : զիգզագաձև

(ա) ջրապտույտ : ձագարաձև

(բ) ճանապարհ : հորիզոնական

(գ) հասարակած : զուգահեռաբար

(դ) սանդուղք : հիերարխիկ

(ե) կամուրջ : կամարաձև

Նախադասության լրացում

Տրված են նախադասություններ, որոնցում բաց է թողնված մի քանի բառ: Բաց թողնված բառերը նախադասության մեջ նշված են գծերով: Մեկ գիծը երբեմն համարվում է մեկ բառ, իսկ երբեմն՝ մի քանի:

Ենթադրական պատասխանների յուրաքանչյուր տարբերակը պարունակում է բառերի խումբ, որի մասերը միմյանցից բաժանված են շեղ (/) գծերով: Ընտրեք պատասխանի այն տարբերակը, որի յուրաքանչյուր մասը հերթականությամբ տեղադրելով համապատասխան բաց թողնված տեղերում կստացվի իմաստով ճիշտ նախադասություն:

28. *Որոշ գիտնականների կարծիքով, պատմությունն իր գործնական օգտակարությունից անկախ, ------ իսկական* գիտության կարգավիճակ, ------ , որ, ------ փոխարեն, ------ բացահայտում է դրանց միջև կապերը:

(ա) իրավունք ունի, պահանջել / միայն այն պայմանով / միմյանց հետ չկապված փաստերը թվարկելու/իրականացնում է դրանց դասակարգումը և

(բ) իրավունք չունի, պահանջել/քանզի ակնհայտ է/փաստերը միմյանց հետ կապելու /այն ձգտում է դրանց դասակարգմանը և

(գ) չպետք է շնորհել / եթե համոզվեք/մեկ հայացքով միմյանց հետ կապված փաստերի դասակարգման/ այն ձգտում է դրանց բացատրության և

(դ) կարելի է շնորհել /չնայած նրա այն յուրահատկությանը/մեկ հայացքով միմյանց հետ չկապակցված փաստերի դասակարգման և բացատրության /այն

29. ------ բոլոր այն ------ բնության հետազոտության արդյունքում, ինչպես նաև տեխնոլոգիայի առաջընթացը, որը ------ , կարող է ------ :

(ա) Զարմանալի չէ, որ / վնասը, որը մարդը հասցրել է միջավայրին / ավելի ու ավելի է մոտեցնում էկոլոգիական վթարը/մարդկությանը բարիք բերել

(բ) Տարօրինակ է, սակայն / բարիքը, որը մարդուն տրվում է / իբր կոչված է թեթևացնելու մարդու կյանքը/մարդկությանը հասցնել մինչև ոչնչացում

(գ) Զարմանալի չէ, որ / բարիքը, որը մարդուն տրվում է / ավելի ու ավելի է մոտեցնում էկոլոգիական վթարը/մարդկությանը բարիք բերել

(դ) Տարօրինակ է, սակայն / վնասը, որը մարդը հասցրել է միջավայրին / իբր կոչված է թեթևացնելու մարդու կյանքը / մարդկությանը հասցնել մինչև ոչնչացում

30. Խորհուրդ տալու իսկական արվեստն այն է, որ այն բանից հետո, ինչ անկեղծորեն խորհուրդ տվեցիր ուրիշին ------ , հաշվի առավ ------ ցանկացավ ------ համառ պահանջով կամ հարկադրաբար:

(ա) ուշադրություն չդարձնես այն բանին, թե ինչպես և երբ/ նա դա, և /քո խորհրդի համաձայն մարդկանց դեպի գործողություն մղել

(բ) սառնասիրտ չմնաս այն բանի նկատմամբ, / թե ոչ նա դա, համապատասխանաբար, չ / քո խորհրդի համաձայն մարդկանց դեպի գործողություն մղել

(գ) ուշադրություն դարձնես նաև այն բանին, ինչպես և երբ / նա դա, և / մարդիկ իրենք «որոշեն սեփական ճանապարհը»

(դ) սառնասիրտ մնաս այն բանի նկատմամբ, / թե ոչ նա դա, և չ/ մարդկանց «ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնել»

Տրամաբանություն

Այսպիսի առաջադրանքները տարբերվում են միմյանցից նախնական տվյալների և կայացրած եզրակացությունների տեսակետից: Այդ պատճառով առանձնահատուկ ուշադրություն դարձրեք հարցին, որը կցված է յուրաքանչյուր առաջադրանքին և տրված տարբերակներից ընտրեք համապատասխան պատասխանը:

Որոշ հարցի պատասխան տալը կհեշտանա , եթե տվյալները արտահայտեք գծագրի կամ դիագրամի ձևով:

31. Թանգարանը գնեց Վան-Գոգի, Գոգենի, Սեզանի և Մոդիլիանիի մեկական նկար: Դրանցից մեկը գուաշով էր կատարված, մեկը՝ ջրաներկով, մեկը գունամատիտով, իսկ մեկը՝ յուղաներկով: Հայտնի է, որ

- գուաշով կատարված նկարի համար վճարեցին ջրաներկով կատարված նկարից ավելի, բայց յուղաներկով կատարված նկարից պակաս:
- Վան-Գոգի նկարի համար վճարեցին բոլորից ավելի,իսկ Գոգենի նկարի համար՝ բոլորից պակաս:

*Ստորև տրված է նկարիչների նկարների և կիրառված նյութի միջև համապատասխանության տարբեր մեկնակերպ: Դրանցից ո՞րն է **<u>հնարավոր</u>** պայմանների համաձայն:*

	Վան-Գոգի նկար	**Գոգենի նկար**	**Սեզանի նկար**	**Մոդիլիանիի նկար**
(ա)	ջրաներկ	գունամատիտ	յուղաներկ	գուաշ
(բ)	յուղաներկ	գուաշ	գունամատիտ	ջրաներկ
(գ)	գուաշ	ջրաներկ	յուղաներկ	գունամատիտ
(դ)	գունամատիտ	գուաշ	ջրաներկ	յուղաներկ
(ե)	գունամատիտ	ջրաներկ	գուաշ	յուղաներկ

32. Փղերը միմյանց հետ հաղորդակցության համար ակտիվորեն կիրառում են ձայնային ազդանշանները: Դրա հետ միասին, այս ազդանշանների մի ամենակարևոր գործառույթը վտանգի մասին եղբայրակիցներին նախազգուշացնելն է: Փղերի նախազգուշացնող ազդանշանների ձայնագրությունների վերլուծության և փոխադարձ համեմատության հիման վրա հետազոտողների խումբը ենթադրեց, **որ փղերը վտանգի տեսակին և լրջությանը համապատասխան յուրահատուկ ձայնային ազդանշաններ են հաղորդում միմյանց**:

*Ստորև թվարկածներից ո՞ր իրավիճակն է **<u>կասկածի տակ դնում</u>** այս ենթադրությունը բոլորից ավելի:*

(ա) Ձայնագրությունների վերլուծությունը ցույց տվեց, որ փղերի նախազգուշացնող կանչը մեղուներ հայտնվելու և կանչը մարդկանց հայտնվելու ժամանակ, ակուստիկորեն միմյանցից տարբերվում է:

(բ) Տարբեր տեսակի վտանգին փղերը տարբեր կերպ են արձագանքում. գրգռված մեղուներ հայտնվելիս՝ նրանք սկսում են գլուխները թափահարել, իսկ մարդկանց հայտնվելիս՝ փախչում են:

(գ) Փորձաքննությանը մասնակցող փղերի երամակին տարբեր իրավիճակում լսեցրին նրանց նախազգուշացնող կանչերի մինչ այդ կատարված մի քանի տարբեր տեսակի ձայնագրություն: Փղերի արձագանքը բոլոր դեպքերում միատեսակ էր:

(դ) Փորձաքննությանը մասնակցող փղերի երամակին միացրեցին փղերի այլ խմբի նախազգուշացնող կանչի ձայնագրություն: Ձայնագրությունը միացնելուն պես փղերը փախուստի դիմեցին և իրենք էլ սկսեցին համանման ձայներ արձակել:

(ե) Ձայնագրությունների վերլուծությունը ցույց տվեց, որ փղերի նախազգուշացնող կանչը այնքան ավելի բարձրաձայն և ինտենսիվ է, որքան ավելի արագորեն է մոտենում նրանց կողմից ընկալված վտանգը:

33. Տրված են դրույթներ.

I. Իմ գրադարանում որոշ գրքեր ֆրանսերեն են:

II. Իմ ընկերը ոչ մի ֆրանսերեն գիրք չի կարդացել:

III. Իմ ընկերը կարդացել է բոլոր գրքերը, որոնք իմ գրադարանում են:

*Ստորև թվարկածներից, ո՞րն է **սխալ** դատողություն այս դրույթների միջև հարաբերակցության մասին:*

(ա) I և II դրույթներից բխում է III-ի հերքումը:

(բ) II և III դրույթներից բխում է I-ի հերքումը:

(գ) I և III դրույթներից բխում է II-ի հերքումը:

(դ) Դրանցից յուրաքանչյուրը բխում է մնացած երկուսից:

(ե) Դրանցից ոչ մեկը չի բխում մնացած երկուսից:

34. Տրված է.

- Եթե գլոբալային ջերմացումը շարունակվի այս նույն թափով, Երկրագնդի վրա գոյություն ունեցող սառցադաշտերը արագորեն կհալչեն:
- Եթե Երկրագնդի վրա գոյություն ունեցող սառցադաշտերը արագորեն հալչեն, շատ տեսակներ կմնան առանց գոյության միջավայրի:

*Ստորև թվարկածներից ո՞րն է **բխում** այս դրույթներից:*

(ա) Գլոբալային ջերմացումը այս նույն թափով չի շարունակվի կամ շատ տեսակներ առանց գոյության միջավայրի չեն մնա:

(բ) Եթե Երկրագնդի վրա գոյություն ունեցող սառցադաշտերը արագորեն չհալչեն, ապա շատ տեսակների գոյության միջավայրը կպահպանվի:

(գ) Գլոբալային ջերմացումը այս նույն թափով չի շարունակվի կամ շատ տեսակներ կմնան առանց գոյության միջավայրի:

(դ) Գլոբալային ջերմացումը այս նույն թափով կշարունակվի կամ շատ տեսակներ կմնան առանց գոյության միջավայրի:

(ե) Եթե գլոբալային ջերմացումը այս նույն թափով չի շարունակվի, ապա շատ տեսակների գոյության միջավայրը կպահպանվի:

Ընթերցած տեքստի ըմբռնում

Ուշադրությամբ ընթերցեք և վերահիմաստավորեք տեքստը: Յուրաքանչյուր հարցի ենթադրական պատասխաններից ընտրեք այն տարբերակը, որը արդարացված է տվյալ տեքստի համաձայն:

Այս կամ այն հարցին ծանոթանալուց հետո, պատասխանելու համար հնարավոր է պահանջվի կրկին տեքստին վերադառնալ, համապատասխան հատվածը կրկին ընթերցել և նորից հարցին անցնել: Դա կհեշտացնեք ինչպես տեքստի, այնպես էլ յուրաքանչյուր հարցի վերջում տրված համապատասխան նշումները «սեղմելով»:

i Դեռևս 20 տարի առաջ հետազոտողների մեծամասնությունը կարծում էր, որ գիտի նեոլիթյան հեղափոխության ժամանակը, տեղը և տևողությունը, որը սկիզբ դրեց հողագործության և որսորդ-հավաքողների մասնատված, քոչվոր խմբերի մի տեղում հաստատմանը: Հողագործ մարդիկ կարողացան միասին ապրել ավելի մեծ խմբերով: Իսկ բազմամարդ հասարակությունում հնարավոր էր գաղափարները հեշտությամբ կիսել-փոխանակել: Աճեց տեխնոլոգիական և սոցիալական նորարարությունների թափը: Անշրջելի դարձավ դեռևս ոչկայուն խմբերի միավորման համար կազմակերպված կրոնի առաջացումը:

ii Իսկ վերջին տարիներին բազմաթիվ նոր հայտնագործությունների, առաջին հերթին, **Գոբեքլի թեփեի** համալիրի պեղումների արդյունքները, շատ գիտնականների ստիպեց վերանայել իրենց կարծիքները: Գոբեքլի թեփեի համալիրը գտնվում է Հարավային Թուրքիայում Տիգրիսի և Եփրատի ակունքների մոտ: Այն մոտավորապես մ.թ.ա. 9600-8200 թվականներին է կառուցվել: Այստեղ կլորավուն շրջանների ձևով վեր են խոյանում մի քանի տասնյակ քարե հսկայական սյուներ: Զարդանախշված կրաքարի սյուների վրա պատկերված են առյուծների, վարազների, կռունկների, կարիճների և աղվեսների հարթաքանդակներ: Գոբեքլի թեփեի պեղումները սկսեց գերմանացի գիտնական Կլաուս Շմիդտը 1994 թվականին: Նա հայտնաբերեց սյուների առաջին կլորավուն շրջանը: Գեոմագնիսական հետազոտությամբ հողի ընդերքում հայտնաբերվեց ևս 20 կլոր շրջան: Ամենամեծը, 16-տոննանոց սյունը 5,4 մետր բարձրության է: Շրջանները դասավորված են որոշակի կարգի համաձայն: Կրաքարի յուրաքանչյուր սյուն հսկայական **T** – տառի ձև ունի:

iii Շմիդտի կարծիքով, **T**-սյուները մարդու «ոճավորված» պատկեր է – որոշ սյան «ուսերից» իջնում են ձեռքերը նրբորեն մշակված մատներով, որոնք ուղղված են «մեջքին փաթաթված գոտուն»: Քարերը երեսով շրջված են կենտրոնի կողմը. ինչպես «հանդիպելիս կամ պարելիս»: Հնարավոր է,սա արտացոլում է կրոնական արարողություն (հոգևորականների պար): Ոմանց կարծիքով, հարթաքանդակների կենդանիները պաշտպանում էին սյուների ձևով պատկերված ֆիգուրները, որպես այն աշխարհի

Անցնել հարցերին. 35 36 37 38 39 40

գերէակների հաղթական խորհրդանշաններ: Գոբեքլի թեփեում հայտնաբերված չէ բնակության որևէ նշան՝ օջախ կամ հողագործության հետք: Գոբեքլի թեփեն աղոթատեղի էր: Այն կարող է պատահի նաև Դիսնեյլենդի նեոլիթյան մեկնակերպը լինել: Այստեղ անց էին կացվում տոներ, հավաքվում էին զվարճանալու համար: Անհրաժեշտ կլիներ որոշ տեսակի սոցիալական կազմակերպություն ինչպես տաճարը կառուցելու, այնպես էլ այնտեղ կուտակված ժողովրդին կառավարելու համար: Այս տաճարը կառուցել են հավաքողները: Շմիդտի կարծիքով, Գոբեքլի թեփեն առաջարկում է քաղաքակրթության զարգացման շրջված սցենարը. հավաքողների կողմից հսկայական տաճարի կառուցումը ապացուցում է այն, որ կրոնը կարող է նաև առաջացած լինել մինչև քաղաքակրթության զարգացումը:

Ֆրանսիացի հնէաբան Ժակ Կովենը «խորհրդանշանների հեղափոխություն» է անվանում գիտակցության մեջ կատարված այն հայեցակարգային փոփոխությունը, որը մարդուն հնարավորություն տվեց պատկերացնել Աստվածներին, որպես մարդուն նման գերէակներ, որոնք գոյություն ունեին ֆիզիկական աշխարհից դուրս: Շմիդտը Գոբեքլի թեփեն քննարկում է որպես Կովենի տեսակետի պատկերազարդում: „T-սյուները ճիշտ այն ուրիշ աշխարհի բնակիչների խորհրդանշաններն են», ասում է նա և ավելացնում. «Քաղաքակրթության սկիզբը մինչև օրս մենք բոլորս վերագրում էինք բնության ուժերին: Իսկ այժմ կարծում եմ, քաղաքակրթությունը մարդու գիտակցության պտուղ է»: Թերևս, որոշ գիտնականներ կասկածանքով են նայում քաղաքակրթության զարգացման ընդհանուր սցենարը գտնելու փորձին: Քաղաքակրթության զարգացման հիմքը մի տեղ կարող էր լինել հողագործությունը, այլ տեղ՝ արվեստը և կրոնը կամ բնակչության աճը և սոցիալական կազմակերպությունը:

Անցնել հարցերին. 35 36 37 38 39 40

35. Ի՞նչ հարաբերակցություն է I և II պարբերությունների միջև:

(ա) II պարբերությունում նկարագրված հայտնագործությունը հավելյալ փաստարկի գործառույթ է կատարում մարդու զարգացման ուղու համընդհանուր ճանաչված մեկնակերպի համար, որն առաջարկվում է I պարբերությունում:

(բ) II պարբերությունում ակնարկ է այն մասին, որ դրանում նկարագրված օրինակը կարող է կասկածի տակ դնել մարդու զարգացման ավանդական սցենարը, որը տրված է I պարբերությունում:

(գ) II պարբերությունում առաջարկված օրինակը լրիվությամբ չեզոքացնում է նեոլիթյան հեղափոխության մասին դատողությունը, որը I պարբերությունում է զարգացած:

(դ) II պարբերությունում տրված է այլընտրական մեկնակերպը հողագործության զարգացման այն տեսության մասին, որը I պարբերությունում է ձևավորված:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

36. Ինչի՞ հիման վրա է Կլաուս Շմիդտը ենթադրում, որ T-սյունները մարդու ոճավորված պատկերներ են:

(ա) T-սյունները շրջանաձև են դասավորված, քարերը երեսով կենտրոնի կողմն են շրջված և հոգևոր ծառայողների պատկերներ են ներկայացնում:

(բ) Կրաքարի սյունները հսկայական T տառի ձև ունեն և զարդանախշված են, այս սյունները վեր խոյացրին հավաքողները:

(գ) T- սյուների վրա, այսպես կոչված, գոտկատեղի մոտ քանդակված են ձեռքի մատներ, իսկ սյունները այնպես են միմյանց կողմ շրջված, ինչպես մարդիկ պարելիս:

(դ) T-սյունները մարդու ձև ունեն, յուրաքանչյուրն ունի քանդակված գլուխ, ուսեր և ձեռքեր, միմյանց «նայում են», ինչպես մարդիկ հանդիպելիս:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

37. Ստորև թվարկածներից ո՞ր կարծիքը կամ փաստը **անմիջականորեն մատնացույց չի անում** Գոբեքլի թեփեի նշանակության մասին:

(ա) Սյուների դասավորությունը կարող է պատկերել հոգևորականների ծիսական պարը:

(բ) Գոբեքլի թեփեն կարող էր լինել նաև Դիսնեյլենդի նեոլիթյան մեկնակերպը:

(գ) Գոբեքլի թեփեում հնէաբանները չեն հայտնաբերել բնակության ոչ մի նշան:

(դ) Հարթաքանդակի վրա փորագրված կենդանիները հնարավոր է պաշտպանում էին որպես սյուներ պատկերված ֆիգուրները՝ այն աշխարհի էակների հաղթական խորհրդանշանները:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

38. Շմիդտը Գոբեքլի թեփեն քննարկում է որպես Կովենի տեսության պատկերազարդում, քանզի.

(ա) այս համալիրի պեղումների ժամանակ հայթայթած մի քանի արտեֆակտ հաստատում է այն, որ այդ ժամանակ արդեն մարդը կարող էր պատկերացնել Աստվածներին մարդու տեսքով և փորձեց նրանց խորհրդանշորեն պատկերել:

(բ) Այս հսկայական տաճարի պեղումների ժամանակ հայտնաբերված նյութը հաստատում է այն, որ մարդկանց խմբերում,որոնք նեոլիթյան ժամանակաշրջանում են հաստատվել այս տարածաշրջանում, քաղաքակրթության զարգացումը կատարվեց ընդհանուր սցենարով:

(գ) Այս համալիրը կառուցելու համար հարկավոր էին տեխնոլոգիական գիտելիք և ունակություններ, որոնք չուներ որսորդ-հավաքողների հասարակությունը:

(դ) Գոբեքլի թեփեի գոյությունը տալիս է նոր վկայություններ քաղաքակրթության զարգացման մասին հաստատված կարծիքների համար:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

39. Քաղաքակրթության զարգացումը պայմանավորող գործոնների մասին ստորև տրված կարծիքներից ո՞րը **արտացոլված չէ** տեքստի վերջին նախադասության մեջ:

(ա) Քոչվոր խմբերի մեկ տեղում հաստատվելը և հողագործության զարգացումը օժանդակեց տեխնոլոգիական և սոցիալական նորարարության առաջացմանը, ինչը ենթադրում է քաղաքակրթության զարգացում:

(բ) Մարդու պատկառանքը գերբնական ուժերի նկատմամբ և նրա մղումը դեպի տեսարաններ կարող էր դառնար սկիզբ քաղաքակրթության համար:

(գ) Քաղաքակրթության առաջընթացին կայծ տվեց միջավայրի փոփոխությունը. սառցակալման ավարտից հետո մարդուն նոր տարածքներ յուրացնելու հնարավորություն տրվեց, ինչը պայմանավորեց քաղաքակրթության նոր օջախների առաջացում:

(դ) Մարդկանց մեծ խմբերի համակեցությունը օժանդակում է նրանց միջև գիտության և գաղափարների տարածմանը, ինչպես նաև պահանջում է նոր սոցիալական ինստիտուտների ձևավորում, ինչը քաղաքակրթության զարգացման նախապայմանն է:

Վերադարձ տեքստի I էջին

Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40

40. Առաջարկում ենք Գոբեքլի թեփեի տարածաշրջանի կապակցությամբ հավելյալ տեղեկություններ.

I – Նեոլիթյան հեղափոխության կենտրոնն էր «Պտղաբեր կիսալուսին»- աղեղնաձև տարածքը, որը Ղազե գավառի հյուսիս-արևելքից թեքվում է դեպի Հարավային Թուրքիայի կողմը և այնուհետև ուղղվում է դեպի Իրաք: Մ.թ.ա. 6000 թվականին հավաքողներից մինչև հողագործություն անցման փուլը այստեղ գրեթե ավարտված էր: Գոբեքլի թեփեն գտնվում է այս տարածաշրջանի հյուսիսային եզրին:

II – Գիտնականների՝ կուլտուրաների մշակման և կենդանիների տնային ցեղերի կիրառման առաջին ապացույցը գալիս է Նուվալու Չորից: Դա բնակավայր է Գոբեքլի թեփեից 30 կմ հեռավորությամբ:

III – Գոբեքլի թեփեից 160 կմ տարածության վրա գտնվում է նեոլիթյան բնակավայր: Դրա մոտակայքում հայտնաբերվեցին T-ձևի ավելի փոքրիկ սյուների վրա պատկերված կենդանիներ:

Ստորև թվարկածներից ո՞ր ենթադրությունն է հիմնվում տեքստի և **բոլոր երեք** տեղեկությունների վրա:

(ա) Ժամանակի ընթացքում Գոբեքլի թեփեի տաճարի վրա աշխատող կամ արարողությանը հավաքված մարդկանց համար բավարար քանակության սննդի հայթայթման կարիք էր առաջանում: Հատկապես սա սկիզբ դրեց վայրենի հատիկայինների ինտենսիվ բազմացմանը և կենդանիների ընտելացմանը:

(բ) Գոբեքլի թեփեն կարող էր լինել նեոլիթյան հեղափոխության սկզբնական վայրը: Հատկապես դրա շուրջը ձևավորվեց ընդհանուր կրոնով միավորված հասարակությունը, որին բնութագրական է ճարտարապետության կամ քանդակագործության որոշակի ոճ:

(գ) Գոբեքլի թեփեի տաճարը կառուցելիս արդեն պետք է այս տարածաշրջանում լիներ բույսերի աճեցման և կենդանիների ընտելացման փորձ, հնարավոր է այստեղ նույնպես հայտնաբերվի նեոլիթյան բնակության հետք:

(դ) Գոբեքլի թեփեն հաստատում է, որ քաղաքակրթությունը մարդու խելամտության պտուղ է: Այդ մասին է վկայում արվեստի այն ոճը, որը ընդհանուր է տարածաշրջանում հայտնաբերված տաճարային համալիրների համար:

Վերադարձ տեքստի I էջին Վերադարձ տեքստի II էջին

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40